Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ՝ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՄՀՄԻ ԱՆԴԱՄ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Արտուր Մովսիսյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը***

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***

Ռուսաստանի Դաշնություն ք. Դուբնա, 19-24 մարտի, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ

5. Գործուղման նպատակը *(աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)*

Մասնակցություն Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի ֆինանսական կոմիտեի և ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների խորհրդի նիստերին

6. Քննարկված թեմաները-

1. ՄՀՄԻ 2023 թվականի բյուջեի կատարողականը և 2024 թվականի բյուջեի նախագծի ճշգրտում,
2. ՄՀՄԻ-ի 2023թ. ֆինանսական գործունեության ստուգումներ անցկացնելու նպատակով աուդիտորական կազմակերպության ընտրություն,
3. ՄՀՄԻ ֆինանսական հարցերով վերահսկիչ պալատի 2024 թվականի հունվարի 15-ի աշխատանքային խմբի խորհրդակցության արդյունքների ամփոփում,
4. ՄՀՄԻՀ ֆինանսական կոմիտեի գործունեության ընթացակարգի կանոնակարգում փոփոխություններ ներկայացնելու առաջարկություն,
5. Այլ թեմաներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ներկա եմ գտնվել Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի հայկական պատվիրակության՝ տնօրեն և գիտական ստորաբաժանումների ղեկավարներ և

ՄՀՄԻ ղեկավարության՝ տնօրեն և ինստիտուտի ղեկավարության անդամներ, հանդիպմանը և ինստիտուտների միջև համագործակցության համաձայնագրի հանդիսավոր ստորագրմանը: Հանդես եմ եկել ելույթով և նշել, որ երկու ինստիտուտները ունեն համագործակցության մեծ պատմություն և նոր կնքվող համաձայնագիրը նոր խթան կհանդիսանա համատեղ գիտական աշխատանքների, գիտական կադրերի փոխանակման, և Երևանում համատեղ լաբորատորիայի ստեղծման համար:

Տեղի են ունեցել հանդիպումներ նաև ՄՀՄԻ-ում աշխատող հայ գիտնականների հետ, ներկայացվել են Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից իրականացվող բարեփոխումները և հետագա զարգացման հեռանկարները:

ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի և ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների խորհրդի նիստերին հանդես եմ եկել ելույթներով, ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության ֆինանսական պարտավորությունների կատարման ընթացքը և ՄՀՄԻ հետ հետագա համագործակցության վերաբերյալ մեր առաջարկությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ստորագրվել են ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի և ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների խորհրդի նիստերի արձնագրությունները:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է ՄՀՄԻ անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նախագահի ենթակայության ներքո գործող ֆինանսական հարցերով աշխատանքային խմբի հաջորդ հանդիպումը անցկացնել Երևանում և մասնավորապես քննարկել ՄՀՄԻ անդամ-պետությունների անդամավճարի հաշվման մեթոդաբանության փոփոխության հարցը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Արտուր Մովսիսյան

27.03.2024թ.